Մազանդարանի եւ Գիլանի Հայերի հաւ-
տուածի մասին շատ քիչ տեղեկութիւններ ու-
նենք: Առաքել վարդապետ ոչինչ չէ խօսում
պարզապէս, բայց Շարդէն ասպետի վկայութիւնը
բաւական լոյս է սփռում խնդրի վրայ. բացի
դրանից կաթուղիկոսական զանազան կոնդակներ
եւս ապացուցանում են, որ այդ երկիրներում
եւս մեծ թուով հայ գաղթականներ են բնա-
կեցրել, բայց նրանք շուտով անհետացել են:
Ահա ինչ է գրում Շարդէն:

"Մազանդարանը մի շատ պտղաբեր երկիր է,
բայց օդն շատ խոնաւ, տաք ու անառողջ: Շահ-
աբբաս Մեծից առաջ այդ երկիրն կատարեալ ա-
նապատ էր, բայց այդ մեծ աշխարհակալ եւ քա-
ղաքագէտ իշխանը տեղափոխեց Հայաստանից եւ
Վրաստանից այդ երկրի մէջ մի հիանալի ժողովուրդ
թէ այն պատճառով, որ այդ երկիրները աւերուեն,
որպէս զի թիւրքերը չկարողանան ամէն տարի գալ
եւ իր հետ պատերազմել եւ թէ այն պատճառով,
որ Մազանդարանը մեծ յարմարութիւններ է ներ-
կայացնում շերամի մշակութեան համար: Բաց ի
դրանից նրա մայրը Մազանդարանցի լինելով, յոր-
դորում էր որդուն շէնացնել այդ երկիրը: Նա փո-
խադրեց 30.000 քրիստոնեայ ընտանիք, կարծելով,
որ այդ տեղ շատ կ'աճեն եւ կը բազմանան, "որով-
հետեւ — ասում էր նա — Մազանդարանը քրիստո-
նեաներին համար շատ յարմար երկիր է. այդ տեղ գինին
եւ խոզն առատ են, իսկ քրիստոնեաներին համար անհրա-
ժեշտ է գինին եւ խոզը: Նրանք սիրում են ծովով գնալ,
նրանք առեւտուր են անում Մոսկովցիների՝ իրանց եղ-
բայրակիցների հետ Կասպից ծովի վրայով:"

"Շահաբբաս այդ երկրում քաղաքներ եւ
հոյակապ պալատներ շինեց, որպէս զի խրախուսի այդ